

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 2-Ի N 1911-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. **Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը** - Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 2-ի «Հայաստանի Հանրապետության մարզերի առողջապահության համակարգերի օպտիմալացման ծրագրերը հաստատելու մասին» N1911 -Ն որոշման 1-ին կետի ժ) ենթակետով հաստատված 10-րդ հավելվածի 3-րդ կետում «Աղավնաձորի ամբուլատորիա» փակ բաժնետիրական ընկերության նախկին շենքը 1300 քառ.մետր մակերեսով, որը ներառված էր «Եղեգնաձորի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հաշվեկշռում պետք է հանվեր և հանձնվեր Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությանը, սակայն հանձնում-ընդունում տեղի չի ունեցել, քանի որ վերը նշված հավելվածում ամրագրված և փաստացի գոյություն ունեցող մակերեսների միջև առկա են անհամապատասխանություններ՝ մասնավորապես հավելվածով անշարժ գույքի մակերես է սահմանվել 1300 քառ.մետր, իսկ սեփականության գրանցված վկայականում նշված է 757.17 քառ.մետր (վկայական՝ N 05112012-10-0082):

Սկսած 2002 թվականից, երբ շահագործման է հանձնվել «Աղավնաձորի ամբուլատորիայի» նոր մասնաշենքը, հին մասնաշենքում համայնքի ղեկավարի առաջարկությամբ և առողջապահական փակ բաժնետիրական ընկերության տնօրինության համաձայնությամբ բնակություն են հաստատել 11 կարիքավոր ընտանիքներ: Վերջիններս բազմիցս դիմումներ են հղել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետին, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետին, Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանին և խնդրել իրենց զբաղեցրած բնակտարածքները սեփականության իրավունքով օտարել:

2. **Առաջարկվող կարգավորման բնույթը** - «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 2-ի N 1911-Ն

որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին>> որոշման ընդունումը հնարավորություն կտա վերը նշված որոշման 1-ին կետի, ժ) ենթակետով հաստատված թիվ 10-րդ հավելվածի 3-րդ կետի պահանջը կատարել: Այն է՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությանն հանձնել <<Եղեգնաձորի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության հաշվեկշռում ներառված <<Աղավնաձորի ամբուլատորիա>> փակ բաժնետիրական ընկերության հին շենքը 757.17 քառ.մետր տարածքով, հետագայում Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Աղավնաձոր համայնքի 11 ընտանիքի բնակարանային խնդիրները լուծելու համար:

3. **Ակնկալվող արդյունքները-** նախագծի ընդունման արդյունքում Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությանը կհանձնվի գույքը, ինչը հետագայում հնարավորություն կնձեռնի լուծել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Աղավնաձոր համայնքի 11 կարիքավոր ընտանիքների բնակարանային խնդիրները: